ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հուլիսի 2023 թվականի N 1232 - Ա

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված կարգի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9.1-ին կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված) կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում

նշանակալի նվաճումներ ունեցող և մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և ասպիրանտուրայի կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով Սիփան Սամվելի Բարեյանի, 2-րդ ենթակետով Գևորգ Նարեկի Փանոսյանի, 2-րդ կետի 1-ին ենթակետով Մանվել Արսենի Աբրահամյանի, 3-րդ ենթակետով Օհան Առաքելի Սեմիրջյանի, 4-րդ ենթակետով Արեն Ատոմի Մխիթարյանի, 6-րդ ենթակետով Հայկ Վահրամի Տեր-Մաթևոսյանի, 12-րդ ենթակետով Վահան Ժոզեֆի Սարգսյանի, 17-րդ ենթակետով Սամվել Ասատուրի Աղախանյանի, 19-րդ ենթակետով Դավիթ Տիգրանի Ռաշոյանի, 28-րդ ենթակետով Արտաշես Արտակի Մանուկյանի, 29-րդ ենթակետով Գրիգոր Նարեկի Գրիգորյանի, 30-րդ ենթակետով Վլադիմիր Վիգենի Քոչարյանի, 32-րդ ենթակետով Վլադիմիր Երվանդի Հովհաննիսյանի, 34-րդ ենթակետով Հրաչիկ Խաչատուրի Բաղդասարյանի, 35-րդ ենթակետով Գևորգ Արմանի Ղազարյանի, 38-րդ ենթակետով Ռազմիկ Մելիքի Էլոյանի, 40-րդ ենթակետով Ալբերտ Արթուրի Հարությունյանի, 43-րդ ենթակետով Նիկոլայ Հովհաննեսի Մեսրոպյանի, 44-րդ ենթակետով Սամվել Հարությունի Հարությունյանի, 47-րդ ենթակետով Էրիկ Սաֆարի Հարությունյանի, 49-րդ ենթակետով Հայկ Գրիգորի Սողոմոնյանի, 53-րդ ենթակետով Սարգիս Արսենի Մարգարյանի, 58-րդ ենթակետով Էդուարդ Արաիկի Վասիլյանի, 59-րդ ենթակետով Լևոն Սամվելի Ջաքարյանի, 61-րդ ենթակետով Նորայր Դանիելի Ազատյանի, 63-րդ ենթակետով Լևոն Արմանի Պետրոսյանի, 65-րդ ենթակետով Ալբերտ Արմանի Ղազարյանի, 67-րդ ենթակետով Սամվել Էրիկի Աղավելյանի, 3-րդ կետի 1-ին ենթակետով Վյաչեսլավ Պարույրի Պետրոսյանի, 2-րդ ենթակետով Արեգ Նարեկի Բարսեղյանի, 4-րդ կետի 2-րդ ենթակետով Լևոն Արշակի Հարությունյանի, 3-րդ ենթակետով Գևորգ Կարենի Ջաղոյանի, 5-րդ կետում ընդգրկված Սամվել Արթուրի Գասպարյանի մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում նրանց 18 տարին լրանալուց հետո:

5. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով Արման Տիգրանի Դավթյանի, 2-րդ կետի 21-րդ ենթակետով Անդրանիկ Արտակի Փամբուխչյանի, N 2 հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով Գևորգ Արթուրի Սիմոնյանի, 3-րդ կետով Սիս Մասիսի Աղայանցի, N 3 հավելվածի 5-րդ կետով Վահագն Արթուրի Գիշյանի, 14-րդ կետով Էդվարդ Արսենի Խալաֆյանի, 15-րդ կետով Համլետ Նարեկի Խաչատրյանի, 22-րդ կետով Վազգեն Արթուրի Հարությունյանի, 37-րդ կետով Աղասի Թադևոսի Սեյրանյանի, 41-րդ կետով Հայկ Լևոնի Քալանթարյանի մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում նրանց այլ հիմքով ստացած տարկետումը դադարելու օրվանից:

6. Սահմանել, որ սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նշված քաղաքացիների համար սույն որոշմամբ տրված տարկետումներն ուժի մեջ են մտնում մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ ներկայացված՝ համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու (հրամանագրվելու) վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիման վրա (իսկ ընդունելության ավելի ուշ ժամկետների դեպքում՝ տվյալ բուհից տեղեկանք ընդունվելու ժամկետների մասին): Եթե մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նշված քաղաքացիներն իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ չեն ներկայացնում համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու (հրամանագրվելու կամ ընդունելությունն ավելի ուշ լինելու) վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանք, ապա նրանք համարվում են սույն որոշման շրջանակներում տարկետման իրավունք չունեցող և ենթակա են պարտադիր զինվորական ծառայության՝ հայտարարված 2023 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.07.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ